Երկու երեխայի մահվան մեջ մեղադրվող բժշկուհու գործը՝ վերաքննիչ դատարանում

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

Երկու երեխայի մահվան մեջ մեղադրվող բժշկուհի Անահիտ Պետրոսյանը դատապարտվեց երեք տարվա ազատազրկման

Երկու երեխայի մահվան գործով ազատազրկված բժշկուհին կբողոքարկի դատավճիռը (Տեսանյութ)

2016 թ. օգոստոսի 31-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանում կքննվի մանկահասակ Կարինե Հովհաննիսյանի մահվան գործով տուժող կողմի ներկայացրած վերաքննիչ բողոքը: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավաբան, փաստաբան Անի Չատինյանը վերաքննիչ բողոքով պահանջել է բեկանել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ հունիսի 2-ի վճիռը՝ Անահիտ Պետրոսյանի նկատմամբ նշանակելով ազատազրկման ձևով պատիժ 5 տարի ժամկետով, բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով 3 տարի ժամկետով: